ՊԱՅՄԱՆԱԳՐԻ N Ա-9.6.1/28
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան 01. փետրվար 2018 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը, ի դեմս նախարարության աշխատակազմի ղեկավար՝ Ն. Հարությունյանի (այսուհետ՝ նախարարություն), որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Հայ ասպետ» կրթադաստիարակչական բարեգործական հիմնադրամը, ի դեմս հիմնադրամի տնօրեն Կ.Տոնոյանի (այսուհետ՝ կազմակերպություն), որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ կողմեր), հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 28-ի <<ՀՀ 2018 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին>> N 1717-Ն որոշումը (այսուհետ՝ որոշում), 09.06.01.<<28. 'Հայրենյաց ասպետներ' հայրենասիրական կրթադաստիարակչական ծրագրի>> այսուհետ՝ ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով նախարարությունը պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով կազմակերպությանը հատկացնել որոշմամբ նախատեսված՝ 64 504 100 (վաթսունչորս միլիոն հինգ հարյուր չորս հազար մեկ հարյուր) ՀՀ դրամ գումար, իսկ կազմակերպությունը պարտավորվում է ծրագիրն իրականացնել որոշմամբ և սույն պայմանագրով սահմանված կարգով:

1.2. Ծրագրով նախատեսված՝ կազմակերպության կողմից իրականացվելիք միջոցառումները (այսուհետ՝ միջոցառումներ) ներկայացված են սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող հավելվածում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. Նախարարությունը իրավունք ունի՝

2.1.1. ցանկացած ժամանակ (այդ թվում՝ լիազոր մարմնի միջոցով) ստուգելու կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

2.1.2. որոշմամբ սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և կազմակերպությունից պահանջելու վճարել սույն պայմանագրի 5.1-ին կետով նախատեսված տուգանքը.

2.1.3. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. կազմակերպությունը ժամանակին չի սկսում ծրագրի իրականացումը, կամ ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

բ. կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին.

2.1.4. սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:

2.1.5. սույն պայմանագրի 2.4.4. կետում նշված ժամկետներում կազմակերպության կողմից կատարողական հաշվետվությունները չներկայացնելու դեպքում ժամանակավորապես դադարեցնել գումարի տրամադրումը:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. իրականացված միջոցառման արդյունքը պետական մարմնի կողմից ընդունվելու դեպքում պահանջելու վճարել իրեն հասանելիք գումարը.

2.2.2. պետական մարմնի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները:

2.3. Պետական մարմինը պարտավոր է՝

2.3.1. ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել կազմակերպությանը.

2.3.2. կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ.

2.3.3. իրականացնել ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ.

2.3.4. իրականացված միջոցառման մասին ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել դրանք ստանալու օրվանից մինչև 20 աշխատանքային օրվա ընթացքում: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումը համապատասխանում է ծրագրի և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են: Ընդ որում, պետական մարմինը հաշվետվությունն ընդունելու դեպքում եռօրյա ժամկետում դրա մասին գրավոր ծանուցում է կազմակերպությանը:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. իրականացնել ծրագրի շրջանակներում նախարարության կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման N 20 ստանդարտի դրույթներին համապատասխան հաշվառում.

2.4.2. պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և (կամ) սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով.

2.4.3. կատարել նախարարության կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները.

2.4.4. մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 10-ը, իսկ տարեկան կտրվածքով՝ մինչև հաջորդ տարվա հունվարի 25-ը ներկայացնել իրականացված միջոցառումների վերաբերյալ կազմակերպության կատարողական հաշվետվությունները,

2.4.5. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու նախարարության հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում.

2.4.6. նախարարության կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում կազմակերպությունը պարտավորվում է անվճար՝ նախարարության կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները.

2.4.7. ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան:

3. Մոնիթորինգը

3.1. Նախարարության ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

3.2. Մոնիթորինգն իրականացվում է նախարարության և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

3.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

3.4. Նախարարությունը ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

3.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4. Վճարման կարգը և ժամկետները

4.1. Նախարարությունը՝ սույն պայմանագրի 1.1 կետում նշված գումարը կազմակերպությանը կտրամադրի համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 1717-Ն որոշմամբ նախատեսված եռամսյակային համամասնություններին համապատասխան:

5. Կողմերի պատասխանատվությունը

5.1. Սույն պայմանագրով և ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում կազմակերպությունը պարտավորվում է նախարարությանը փոխհատուցել չիրականացված միջոցառման չափով և վճարել տուգանք՝ չիրականացված միջոցառման համար նախատեսված գումարի 1 տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքի վճարումը կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: Նախարարությունը սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է կազմակերպությանը վճարվելիք գումարներից:

6. Պայմանագրի գործողության ժամկետը

6.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը:

7. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

7.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. Եզրափակիչ դրույթներ

8.1. Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված ծրագիրը հանդիսանում է սույն պայմանագրի անբաժանելի մասը:

8.2. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

8.3. Պայմանագիրը կնքվում է 2 օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

8.4. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Ն ա խ ա ր ա ր ու թ յ ու ն	Կ ա զ մ ա կ ե ր պ ու թ յ ու ն
ՀՀ կրթության և գիտության նախարարություն	<<Հայ ասպետ>>
ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3,	Կրթադաստիարակչական բարեգործական հիմնադրամ
Կառավարական տուն 2	Երևան, Արշակունյանց 20
ՀՀ ՖՆ ԿԳ գործառնական վարչություն	Կոնվերսբանկ ՓԲԸ
Հ/Հ 900011005619	ՀԿՀՀ 02701656
ՀԿՀՀ02512868	Հ/Հ 1930049391310100
Աշխատակազմի ղեկավար Ն. Հարությունյան	Տնօրեն՝ Կ.Տոնոյան
(ստորագրություն) Կ.Տ	(ստորագրություն) Կ.Տ.

Հավելված

2018թ.մարտի 1-ին

Կնքված N29.6.1/28 պայմանագրի

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Միջոցառման անվանումը /N	Համառոտբովանդակությունը	Կատարմանենթականգործառույթների նկարագիրը	Ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները	Վերջնաժամկետ	Պահանջվող գումարը
1. Ծրագրի տեխնիկական աննախապատրաստում:	Հեռուստասրահի վերանորոգում	Հատուկ ձևավորված հանձնաժողովի կողմից կատարվում է սրահի մաշվածության ստուգում, գնահատում և վերանորոգման աշխատանքների պլանավորում: Կատարվում են անհրաժեշտ աշխատանքներ և հեռուստասրահը նախապատրաստվում է նկարահանումների: Իսկ տարվա ընթացքում կատարվում են ընթացիկ կոսմետիկ վերանորագումներ: ----------	Արդյունքում կատարվում է հեռուստասրահի դիզայնիթարմացում և եթեր հեռարձակման համար պատշաճ տեսքի ապահովում:	2018թ. մարտ – դեկտեմբեր ամիսներ	950 000 (ինը հարյուր հիսուն հազար) դրամ

	բ/տեխնիկական միջոցների վերազինում	Վերանայվում է լեդային համակարգի աշխատանքային վիճակը, տեխնիկական միջոցների մաշվածությունը և համապատասխանությունը թվային հեռուստատեսության պահանջներին, կատարվում է տեխնիկական անհրաժեշտ համապատասխանության ապահովում:	Տեխնիկական վերազինումը հնարավորություն է տալիս հնարավորինս խուսափել նկարահանումների ժամանակ տեխնիկական վթարներից և խոտաններից՝ հաղորդաշարի շաբաթական եթեր հեռարձակման անընդհատությունն ու որակն ապահովելու համար:		800 000(ութ *հարյուր հազար) դրամ*
	գ/ լրացուցիչ կրթության կենտրոնի համար անհրաժեշտ մասնագիտական սարքերի և կահույքի ձեռքբերում:	Կենտրոնում դասավանդվող կերպարվեստի, բատիկի, թաղիքագործության, կարպետագործության, քանդակագործության համար անհրաժեշտ սեղանների, շրջանակների, մոլբերտների, համապատասխան գործիքների, արհեստագործական սարքերի, նյութերի և անհրաժեշտ կահույքի ձեռքբերում:	Կենտրոն հաճախող հարյուրավոր երեխաների հնարավորություն է տրվում ծանոթանալ և հմտանալ արհեստների և արվեստների նախնական տիրապետման մեջ, օժտվածության և հետաքրքրասիրությունների շրջանակում կողմնորոշվել մասնագիտության ընտրության հարցում, խորացնել սեփական ժողովրդի մշակույթի իմացությունն ու դառնալ դրանց կրողն ու փոխանցողը:		500 000(հինգ հարյուր հազար) դրամ
	Սրահի վարձակալություն	Երևանի Է. Թելմանի անվան N13 դպրոցի նախասրահում կառուցված հեռուստասրահի շահագործման համար կնքվում է ևս մեկ տարվա վարձակալության պայմանագիր:	Պայմանագիրն հնարավություն է տալիս մեկ տարիով ամրագրել սրահում վերանորոգման աշխատանքներ կատարելու իրավունքը, ապահովել նկարահանումների շարունակականությունը:		960 000(ինը հարյուր վաթսուն հազար)դր.
2.«Հայ ասպետ» - հեռուստախաղ	ա/ համահայաստանյան փուլ - Կազմակերպվում և նկարահանվում է 32 հեռուստախաղ, շաբաթական 1 անգամ եթեր հեռարձակումով(1	Ամեն ամիս նկարահանվում է 4 խաղ, որին մասնակցում են 12 դպրոցի թիմերի 132 աշակերտ(ամեն դպրոցից 11 աշակերտ)՝ հայրենաճանաչողական և աշխարհաճանաչողական թեմաների շուրջ ձեռք բերած իրենց գիտելիքներով, սովորած պարերի ու երգերի իմացությամբ:	Մասնակիցող 96 դպրոցի աշակերտների հնարավորություն է տրվում մրցակցության միջոցով ստանալ հավելյալ գիտելիքներ, ձեռք բերել պայքարելու և հաղթելու ձգտում, տալիս է ինքնագնահատման նոր հնարավորություն: Իսկ վաստակած արշավների ընթացքում տարբեր մարզերի երեխաներ մտերմանում են, երեխաների միջոցով ճանաչում իրենց հայրենիքի մաս հանդիսացող գյուղերն ու քաղաքները,	դեկտեմբեր	47 130 100 (քառասունյոթ միլիոն հարյուր երեսուն հազար հարյուր) դր.

	անգամ էլ կրկնությամբ):	Նախապես հավաքագրվում է փորձագիտական կազմ, որոշվում մրցույթի թեմաները, հայթայթվում են գրքերը և խաղից երկու ամիս առաջ, բոլոր թիմերի հետ տարվում են նախապատրաստական աշխատանքներ: Խաղն անցկացվում է հինգ փուլով, որոնցից երեքում աշակերտները մրցում են հանձնարարված ոչ դպրոցական թեմաների իմացությամբ և երկուսում՝ նաև դպրոցական թեմաների իմացությամբ:	հարազատանում՝ դառնում ընկերներ: Տարեվերջին խաղին մասնակցած 96 դպրոցներում ձևավորված են լինում հայ ասպետյան խմբեր, որոնք իրենց սովորած գիտելիքները, երգերն ու պարերը տարածում են նաև ընկերների շրջանում, դառնում են ավելի ինքնավստահ, ավելի խոսքաշեն և գիտակից: Խաղը նպաստում է նաև ուսուցիչների գիտելիքների առավել խորացմանն ու ընդլայնմանը: Դպրոցական փուլի միջոցով ստուգվում են աշակերտների կողմից դպրոցական ծրագրի յուրացման և որպես մնայուն գիտելիք ամրարման աստիճանը: Հաղթող 36 դպրոցը և նրանց աշակերտները վաստակում են արժեքավոր մրցանակներ, երեխաները մասնակցում են ՀՀ-ում և ԼՂՀ-ում կազմակերպած բազմօրյա արշավների, ճանաչում իրենց հայրենիքը:		
----------	----------	----------	----------		
	բ/բանակային հեռուստախաղի անցկացում ՀՀ ԶՈՒ և Արցախի ՊԲ-ում	ՀՀ ՊՆ համագործակցության արդյունքում կատարվում է հեռուստախաղի անցկացման մասնակից զորամասերի հայտագրում և սկսվում են նախապատրաստական աշխատանքներ՝ տրվում են պարերի, երգերի ուսուցողական տեսասկավառակներ, անհրաժեշտ նյութեր և գրականություն: Հուլիս-սեպտեմբեր ամիսներին անցկացվում է ներզորամիավորումային փուլը, որին մասնակցում է 43 զորամասի թիմ՝ 5-6 զինվորով: Առավելագույն միավոր հավաքած 9 թիմ անցնում է կիսաեզրափակիչ փուլ:	Հեռուստախաղի անցկացումը հնարավորություն է տալիս կրթական հետաքրքրություններ ունեցող մոտ 248 զինվորի համար ապահովել հայրենագիտական և աշխարհաճանաչողական զարգացման շարունակականության հնարավորություն: Տալ նրանց բանակում անհրաժեշտ իրավագիտական և գաղափարախոսական գիտելիքներ: Սպա-զինվոր համատեղ մասնակցությամբ նպաստել նրանց համագործակցային մտածողությանը, գաղափարական զարգացմանը, ազգային հոգեկերտվածքի և ընդհանրապես բանակ-հասարակության կապի ամրապնդմանը: Կարևորել կրթված, խմբային համագործակցության և ընդհանուր հաղթանակի համար պատրաստակամ երիտասարդներին:		
2. Լրացուցիչ դասընթացներ	Փորձաշրջանով ընտրված 100 օժտված	Ձևավորվում է մանկավարժական կազմ, նրանց հետ տարվում են մեթոդական և	Երևանից և կից մարզերից հավաքված երեխաներից ձևավորվում է բարոյահոգեբանական և գաղափարախոսական	դեկտեմբեր	8 556 000 (ութ միլիոն հինգ

	աշակերտների համար շաբաթը երկու օր կազմակերպվում են լրացուցիչ դասընթացներ:	գաղափարախոսական աշխատանքներ: Հեռուստախաղերի ընթացքում ընտրված և հարցազրույցով հավաքագրված հատուկ ընդունակություններ կամ մշակութային օժտվածություն ունեցող աշակերտներից ձևավորվում են դասակներ և տարվում կրթամշակութային և դաստիարակչական աշխատանքներ:	մի կուռ միություն, որի յուրաքանչյուր անդամ վերարժեորում է իր ազգային պատկանելիությունն ու նկարագիրը և միաժամանակ կրթվում որպես պետության լիարժեք և բանիմաց քաղաքացի: Երեխաները սովորում են ազգային երգ և պար, դասական երաժշտություն և պար, թուրքերեն, հայրենագիտություն, վարվեցողակարգ, գրքի վերլուծություն, կինոարվեստ և այլն: Ամռանը կազմակերպվող արշավների միջոցով ճանաչում ու սիրում են իրենց հայրենիքը:		հարյուր հիսունվեց հազար) դր.
3.Միջոցառումներ ա/ <<Ազգային տոներ>>	100 երեխայի մասնակցությաբ կազմակերպվում են Սբ. Զատկի, Վարդավառի, Խաղողօրհնեքի տոնակատարություններ:	Երեխաներին նախապես տրվում են տոնի մասին պատմող նյութեր, սովորեցվում է տոնի ծիսական կարգը, նշանակությունը, բեմադրվում են համապատասխան ներկայացումներ, անցկացվում են ծիսական խաղեր: Վարձակալվում են տրանսպորտային միջոցներ և կազմակերպվում տոնակատարության անցկացում ՀՀ որևէ ծիսապաշտական վայրում կամ պատմական հուշարձանի մոտ:	Երեխաների մեջ սերմանվում է ազգային տոների նկատմամբ հետաքրքրասիրություն, ծնողների մասնակցության միջոցով ընտանիքներում վերածնվում և մասսայականացվում են մոռացված ազգային ավանդույթները, ավանդական ճաշատեսակների պատրաստումը: Այդ օրերին ազգային խաղերի, ողջ ծիսակարգի անցկացումը սեր ու հարգանք է սերմանում երեխաների մեջ սեփական ժողովրդի նկատմամբ, նպաստում նրանց հայրենաճանաչողությանը և ազգային հոգեկերտվածքի ձևավորմանը:	Դեկտեմբեր ամիս	300 000 (երեք հարյուր հազար) դր.
--- բ/ <<Հայրենիքի պաշտպաններին>>	--- Երկօրյա այցեր սահմանամերձ գյուղեր և սահմանապահ զորամասեր	--- Երեխաների անմիջական մասնակցությամբ պատրաստվում են նվերներ այդ գյուղերի դպրոցների և սահմանապահ զինվորներ համար, նախապատրաստում է համերգային ծրագրի անցկացում՝ հայրենասիրական երգերի ու պարերի կատարմամբ: Ծրագրի իրականացման համար	--- Նպաստում է երեխաների ինքնահաստատմանը, ինքնուրույն մտածողությանն ու սեփական երկրի պաշտպանությանը մասնակցելու հպարտության ընկալմանը: Դաստիարակում է երախտագիտության ընկալում սահմանապահ գյուղերում ապրող գյուղացու, իրենց հասակակիցների և զինվորների նկատմամբ:		--- 200 000(երկու հարյուր հազար)դրամ

		վարձակալվում է տրանսպորտային միջոցներ:			
4. Արշավներ	1.քառօրյա արշավ Արցախում	70 աշակերտի և 9 ուղեկցող խմբի մասնակցությամբ (եզրափակիչ անցած 9 թիմի վեցական աշակերտի և լրացուցիչ կրթության կենտրոնի 16 սաների) վրանային ճամբարի տեղակայում, ճամբարային դասընթացներ, շրջակա տեսարժան վայրերի և պատմ. հուշարձանների ուսումնասիրություն: Այցեր զորամասեր: Կից ուղեկցող և սպասարկող մեքենա:	Արդյունքում աշակերտները ճանաչում են իրենց հայրենիքի տվյալ հատվածը, մանրամասնորեն ծանոթանում նրա պատմությանն ու պատմամշակութային հուշարձաններին: Գնահատում ազատագրված Արցախի արժեքը, սահմանապահ զինվորների հայրենիքին մատուցած ծառայության դժվարություններն ու նշանակությունը:	նոյեմբեր ամիս	900 000 (ինը հարյուր հազար) դր.
	2. հնգօրյա արշավ Սյունիքում	105 աշակերտի (կիսաեզրափակիչ անցած 18 թիմի 90 և լր. կրթ. 15 հոգու) համար ավտոբուսների, սնդի, քնապարկերի և վրանների նախնական ապահովում: Ուղեկցող աշխատակազմի ձևավորում, մեթոդավորում: Մեկնում, ճամբարի տեղակայում, քառօրյա դասընթացների և արշավների անցկացում: Կից ուղեկցող և սպասարկող մեքենա:	Արդյունքում աշակերտները կայցելեն Խնձորենսկում գտնվող Մխիթար սպարապետի շիրիմին, կայցելեն Տաթև, Խոտ և Շինուհայր հնագույն գյուղեր, հին Կյորես: Կազմակերպվում են ազգայի երգ ու պարի ուսուցում, տվյալ վայրերի մասին պատմաաշխարհագրական դասընթացներ: Լինելով այդ պատմական վայրերում աշակերտները կուսումնասիրեն հայրենիքի այդ հատվածի պատմամշակութային հուշարձանները, տեղական կյանքն ու առանձնահատկությունները:	օգոստոս ամիս	700 000 (յոթ հարյուր հազար)դր.
	3. քառօրյա արշավ Վայոց ձորում	70 աշակերտի (կրտսեր խմբի եզրափակիչ անցած 3 խմբի 18 և լրացուցիչ կրթության 52 սանի)և ուղեկցող խմբի 7 հոգու մասնակցությամբ կազմակերպվում է եռօրյա արշավ դեպի Սպիտակավոր լեռ, որտեղ ամփոփված են Գ. Նժդեհի մասունքները: Տեղում	Նման ուխտագնացություն-արշավները նպաստում են երեխաների մոտ մեր մեծ նախնիների նկատմամբ հարգանքի, նրանց կարևորության ընկալմանը, հայրենաճանաչողական գիտելիքների ավելացմանը, նման վայրերի մաքրության և խնամքի կարևորության և դրանում իրենց դերի գնահատմանը:	հուլիս	400 000 (չորս հարյուր հազար) դրամ

		կազմակերպվում են Նժդեհյան լսումներ, այց Պռոշաբերդ: Կազմակերպվում է վանքի շրջակայքի մաքրում: Կից ուղեկցող և սպասարկող մեքենա:			
	4. <<Գագաթների հաղթահարում>>	Երկօրյա լեռնագնացություն. կմասնակցեն 70 աշակերտ: 2 ավտոբուսի, սննդի, քնապարկերի և վրանների նախնական ապահովում: Աժդահակ լեռան հաղթահարում: Լեռան գագաթին ՀՀ անկախությանը նվիրված տոնակատարության անցկացում: Ուղեկցող աշխատակազմի ձևավորում, մեթոդավորում: Կից ուղեկցող և սպասարկող մեքենա:	Արդյունքում աշակերտների մոտ ամրանում է դժվար հաղթանակների ձգտելու վեհ գիտակցությունը: Ճանաչում են իրենց հայրենիքի տվյալ հատվածը: Զուգահեռում անկախության ձգտումը և ձեռքբերման դժվարությունները բարձր գագաթների հաղթահարման դժվարությունների և գագաթը նվաճելու բերկրանքի հետ:	հոկտեմբեր ամիս	200 000 (երկու հարյուր հազար) դր.
	5.Շրջագայություն Արևմտյան Հայաստանում:	23 ուղեգրի ձեռքբերում, համապատասխան գրականության հանձնարարում, ուղեկցող անձանց նախապատրաստում: Այց Կարս, Վան, Անի, Մուշ, քաղաքներ ու շրջակա պատմական հուշարձաններ՝ նկարահանումով:	Երեխաների մոտ խորանում է նախնյաց երկրի նկատմամբ հետաքրքրությունն ու սերը, վերագնահատվում են կորստի պատճառները: Կորստի ահռելիությունը ստիպում է վերանայել իրենց վերաբերմունքը հայրենիքի վերջին փոքրիկ կտորի նկատմամբ և առավել արժեքավորել այն, ինչ ունենք:	սեպտեմբեր	2 500 000 (եր կու միլիոն հինգ հարյուր հազար) դր.
	Գործուղումներ	ա/Բոլոր արշավներից առաջ ծրագրի աշխատակիցներից ձևավորվում են սպասարկող և մանկավարժական խմբեր, որոնք արշավի ընթացքում ապահովում են մասնակիցների զբաղվածությունն ու ուսումնառությունը:	Մեր մանկավարժների մասնակցությունը արշավներին հնարավորություն են տալիս կազմակերպել հատուկ մշակված արշավային դասեր՝ ազգային պարի, հայրենասիրական և արշավային երգերի ուսուցում, հայրենաճանաչողական և գաղափարախոսական կրթության ապահովում, բանավիճային և գիտախաղային միջոցառումների կազմակերպում:	դեկտեմբեր	408 000(չորս հարյուր ութ հազար) դրամ
		բ/ստեղծվում է 3 հոգանոց փոքրիկ խումբ բանակային խաղերի 1-ին՝ ներզորամասային փուլի խաղերի	Այս կերպ հնարավորություն է տրվում տեղերում անցկացնելու մրցախաղը՝ 43 զորամասի		

	---------- ընդամենը	կազմակերպման համար, որը 5 օրով կազմակերպում է շրջայց՝ Վայք- Գորիս- Ստեփանակերտ- Վարդենիս- Նոյեմբերյան քաղաքներով: ----------	զինվորների Երևան տեղափոխելու փոխարեն: Տնտեսվում են միջոցներն ու ժամանակը:		---------- 64 504 100 (վաթսուն չորս միլիոն հինգ հարյուր չորս հազ. հարյուր) դր.

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ կրթության և գիտության նախարարություն

ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3,

Կառավարական տուն 2

ՀՀ ՖՆ ԿԳ գործառնական վարչություն

Հ/Հ 900011005619

ՀՎՀՀ 02512868

Աշխատակազմի դեկավար

_____ Ն. Հարությունյան

(ստորագրություն)

ԿԱՏԱՐՈՂ

<<Հայ ասպետ>> կրթադաստիարակչական

բարեգործական հիմնադրամ

Երևան Արշակունյաց 20

Կոնվերսբանկ ՓԲԸ –

Հ/Հ 1930049391310100

ՀՎՀՀ 02701656

Տնօրեն

_____ Գ. Տոնոյան

(ստորագրություն)